ՀՀ Ք. ԵՐԵՎԱՆԻ ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 56 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հաստատված է
դպրոցի մանկխորհրդի
07.09.2020 թ. նիստին

Ա. Գալստյան
դպրոցի տնօրեն

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2020-2021 ՈՒՍՏԱՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Դպրոցի համակցված աշխատանքային գործունեությունն ապահովելու նպատակով կատարել աշխատանքների բաժանում	օգոստոս	տնօրեն	
2	Ապահովել առողջ և անվտանգ աշխատանքային ու կրթական միջավայր	տարվա ընթացքում	Տնօրեն	
3	Դպրոցի աշխատակիցների համար կազմակերպել և իրականացնել դասընթացներ՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) առանձնահատկությունները թեմայով	24.08.20-10.09.20	Տնօրեն, բուժքույր	
4	Վարել ջերմաչափման գրանցամատյան	տարվա ընթացքում	Տնօրեն, բուժքույր	
5	Հաշվառել հեռավար կրթության կարիք ունեցող աշակերտներին, տվյալները գրանցել էլեկտրոնային համակարգ	մինչև օգոստոսի 5-ը	ուս. գծով տեղակալ, դասղեկներ, օպերատոր	
6	Կազմել և հաստատել մեթոդական պահանջներին համապատասխան կայուն դասացուցակ՝ • առաջին և երկրորդ խմբերի համար • առաջին և երկրորդ հերթերի համար	26.08.20-10.09.20	ուս. գծով տեղակալ	
7	Ուսուցչի օգնականների ինտեգրում ուսումնական գործընթացին	օգոստոս-սեպտեմբեր	ուս. գծով տեղակալ, ուսուցիչներ	
8	Ծանոթացնել էլեկտրոնային մատյանների վարման կարգին, էլեկտրոնային փաստաթղթերի տեղադրման և օգտագործման կանոններին	26.08.20-10.09.20	ուս. գծով տեղակալ դասվարներ, դասղեկներ	
9	Ապահովել դասի գիտամանկավարժական բարձր մակարդակը, աշակերտի տրամաբանական մտածողության և ինքնուրույն աշխատանքի ունակությունների զարգացումը՝ գիտելիքների ճիշտ գնահատման և ուսուցիչ-աշակերտ համագործակցության միջոցով	տարվա ընթացքում	տնօրենություն	
10	Համադրել համաշխարհային առաջատար ձեռքբերումները, մեր դպրության լավագույն ավանդները, վերցնել լավագույնը և հնարավորություն ընձեռել աշակերտին՝ լիարժեքորեն իրագործել իր սեփական ներուժը:	տարվա ընթացքում	ուս. գծով տեղակալ, մ/մ նախագահներ	
11	Ձևավորել համակողմանի զարգացած, հոգեպես հարուստ, առողջ անհատներ	տարվա ընթացքում	դասավանդող ուսուցիչներ	
12	Զարգացնել սովորողների կարողունակությունները	տարվա ընթացքում	դասավանդող ուսուցիչներ	
13	Պարբերաբար կատարել թեմատիկ, կիսամյակային և տարեկան աշխատանքների վերլուծություններ	տարվա ընթացքում	դասավանդող ուսուցիչներ	
14	Նպատակային օգտագործել անհրաժեշտ դիդակտիկ պարագաները բոլոր առարկաների գծով, կատարել ծրագրով պահանջվող փորձերն ու լաբորատոր աշխատանքները	տարվա ընթացքում	դասավանդող ուսուցիչներ	

15	Նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով բարձրացնել դասավանդման արդյունավետությունը: Ամիսը գոնե մեկ անգամ կազմակերպել տեսադասեր:	տարվա ընթացքում	ուս. գծով տեղակալ, ինֆորմ. ուս.	
16	Ուսուցիչներին և աշակերտներին հատկացնել Հեռավար կրթության իրականացման միասնական հարթակի՝ Microsoft Teams-ի ծածկագրերը: Կազմակերպել հեռավար հանդիպումներ՝ համակարգի գործիքաշարի ծանոթացման նպատակով:	Սեպտեմբեր, հոկտեմբեր	ուս. գծով տեղակալ, ինֆորմ. ուս.	
17	Անհարգելի բացակայությունների կանխում: Սովորողի բացակայության դեպքում դասղեկն այդ մասին տեղյակ է պահում դպրոցի բուժքրոջը կամ տնօրենին, ով իր հերթին տեղեկացնում է տարածքը սպասարկող կամ կցագրված բժշկական կազմակերպությանը:	տարվա ընթացքում	ուս. գծով տեղակալներ, դասղեկներ, բուժքույր	
18	Ուղեցույցով սահմանված կանոնների պահպանման վերահսկման նպատակով մուտքերի մոտ, հարկերում պատասխանատուների և հերթապահների նշանակում	տարվա ընթացքում	տնօրեն	
19	Մանկավարժական հատուկ մոտեցում պահանջող աշակերտների հետ տարվող աշխատանքների կազմակերպում	տարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալ, ծնող. խորհուրդ	
20	Աշակերտների բարոյահիգիենիկ և սեռական դաստիարակության ապահովում	տարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալ, բուժքույր	
21	Դպրոցի և ծնողների սերտ կապն ապահովելու և վերահսկողություն սահմանելու նպատակով ընտրել դասարանական և համադպրոցական ծնողական խորհուրդներ	15.09.20-20.09.20	կրթ. աջ. գծով տեղակալ	
22	ՀՀ ԿԳՆ հրահանգներին համապատասխան տարեվերջյան քննությունների ու վերաքննությունների կազմակերպում	ապրիլ-մայիս 2020	տնօրեն	
23	Անհրաժեշտության դեպքում սովորողների ուսուցումը կազմակերպել <<Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար կրթության կազմակերպման>> կարգին համապատասխան	Ուստարվա ընթացքում	ուս. գծով տեղակալ	

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ելնելով շենքային պայմաններից՝ ուսումնական պարապմունքները կազմակերպել երկու հերթով	ուստարվա ընթացքում	տնօրեն	
2	Ելնելով համաճարակային իրավիճակից՝ դասարանը բաժանել երկու խմբի	սեպտեմբեր	ուս. գծով տեղակալ	
3	Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը	հունիս	գրադարանավար	
4	Վերանորոգել աշակերտական դասագրքերը: Դասագրքերի բաշխումն իրականացնել՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները	հունիս օգոստոս սեպտեմբեր	դասղեկներ գրադարանավար բուժքույր	

5	Կատարել դասաբաշխում: Նախնական դասաբաշխման արդյունքների հիման վրա անցկացնել ուսուցչի թափուր տեղի մրցույթ և համալրել ուսուցչական համակազմը	օգոստոս	տնօրեն	
6	Հաշվառել ռիսկի խմբի ուսուցիչներին	օգոստոս	տնօրեն	
7	Նշանակել դասղեկներ և դասվարներ	օգոստոս	տնօրեն	
8	Նշանակել ուսումնական կաբինետների պատասխանատուներ	օգոստոս	տնօրեն	
9	1. Անցկացնել առարկայական մեթոդմիավորումների նախագահների ընտրություն ա. հումանիտար բ. բնագիտական գ. մաթեմատիկայի դ. տարրական կրթության ե. օտար լեզուների զ. ռազմամարզական և էսթետիկա 2. Հրամանագրել մեթոդմիավորման նախագահներին	28.08-07.09	տնօրեն	
10	Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվա համար	26.08-12.09	Տնօրեն, տնտ. գծով տեղակալ	
11	Ապահովել Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցում նշված պահանջները	ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնտ. գծով տեղակալ	
12	Նշանակել և հրամանագրել դասղեկներին,	օգոստոս	տնօրեն	
13	Կոմպլեկտավորել հետևյալ դասարանները ա. կրտսեր դպրոցի դասարաններ I - 4 II - 4 III - 5 IV-4 բ. միջին դպրոցի դասարաններ V -5 VI - 4 VII - 4 VIII - 4 IX –4 Ընդամենը 38 դասարան	01.09.2020	տնօրեն	
14	Ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ վերը նշված կառույցներում աշխատանքները նորմալ կազմակերպելու համար	մշտապես	տնօրեն	
15	Միջանցքները, մարզադահլիճները, դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքն ու սարքավորումները նախապատրաստել նոր ուստարվան: Կատարել դասարանների վերանորոգման, ախտահանման աշխատանքներ	օգոստոս	տնտ. գծով տեղակալ	
16	Օգտագործման ենթակա դասագրքերը վարձույթով տալ ծնողներին	օգոստոս սեպտեմբեր	գրադարանավար	
17	Դասղեկների հետ ճշտել սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով	սեպտեմբեր	կրթ. աջակց. գծով տեղ., դասղեկներ, ծնողխորհրդի նախագահ	
18	Ձևավորել դասամատյանները	սեպտեմբեր	օպերատորներ	
19	Կազմակերպել աշակերտական խորհրդի աշխատանքները	սեպտեմբեր	տնօրեն, կրթ. աջակց. գծով տեղ., դպրոցի ծնողխորհուրդ	

20	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն	մշտապես	տնօրեն, կրթ. աշակց. գծով տեղակալ	
21	Նշանակել ավագ հերթապահներ՝ պահանջելով նրանցից. ա. հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքում բ. կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը գ. օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին	մշտապես	տեղակալներ	
22	Սահմանել կարգ. Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայանա դասերը սկսելուց 15 րոպե առաջ՝ ըստ <<Աշխատանքի ժամանակացույցի>>՝ հիմք ընդունելով <<Ներքին կարգապահական կանոնները>>: Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունը դնել տնօրենի ուս. գծով տեղակալի վրա	մշտապես	տեղակալներ	
23	Սահմանել վարչասպասարկող անձնակազմի աշխատանքային ռեժիմը, ամրագրել <<Աշխատաքային ժամանակացույցում>>	ուստարվա ընթացքում	տնօրեն	
24	Հետևել, որպեսզի դասղեկները և կաբինետի պատաս-խանատուները պատասխանատվություն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար	ուստարվա ընթացքում	տնօրեն, տնտ. գծ. տեղակալ	
25	Դպրոցական շենքի պահպանման, տնտեսական կարիքները հոգալու, հակահրդեհային միջոցառումներ իրականացնելու պատասխանատվությունը դնել տնօրենի տնտեսական գծով տեղակալի վրա	մշտապես	տնտ. գծ. տեղակալ	
26	Դպրոցական շենքը էլեկտրական հոսանքով ապա-հովելու, էլեկտրական գծերն ու սարքավորումներն անվտանգ պահելու պատասխանատվությունը դնել դպրոցի տնօրենի տնտեսական գծով տեղակալի վրա	մշտապես	տնտ. գծ. տեղակալ	
27	Յուրաքանչյուր շաբաթ անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ	շաբաթը մեկ անգամ	տնօրեն	
28	Հետևել հրապարակման ենթակա փաստաթղթերի տեղադրման և հրապարակման գործընթացին	մշտապես	Տնօրեն, օպերատոր հաշվապահ	
29	Կատարել գրանցումներ էլեկտրոնային մատյաններում	մշտապես	ուս. գծով տեղ., օպերատոր	
30	Աջակցել ուսուցիչներին տարակարգ ստանալու գործընթաց սկսելու ուղղությամբ	մշտապես	ուս. գծով տեղակալ	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերը	Պատասխանատու	Ծանոթու-թյուն
1	2	3	4	5
1	Հրավիրել դասարանական ծնողական հեռավար ժողովներ, անհնարինության դեպքում՝ բացօթյա	սեպտեմբեր	տեղակալներ, դասղեկներ	
2	Նախապատրաստել ընդհանուր ծնողական հեռավար ժողով և քննարկել դպրոցի առջև ծառացած համատեղ լուծման ենթակա հարցերը	ուստարվա ընթացքում	տնօրեն, ծնողխորհրդի նախ., դասղեկներ	

3	Ծնողական համայնքի աջակցությամբ հարստացնել դպրոցի արտաբյուջետային միջոցները: Խորհրդի որոշմամբ այդ միջոցները նպատակաուղղել դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանը, նորարարական և փորձարարական աշխատանքների կազմակերպմանը	սեպտեմբեր, ուստարվա ընթացքում	տնօրեն, ծնողական խորհուրդ, դպրոցի խորհուրդ	
4	Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումների թեմատիկ պլան	սեպտեմբեր	կրթ. աջ. գծով տեղակալ	
5	Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները	սեպտեմբեր	տնօրեն, կրթ. աջ. գծով տեղակալ, ծնողխորհուրդ	
6	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը՝ սովորողների ուսուցման և դաստիարակության բարելավման գործում	ուստարվա ընթացքում	տնօրեն	
7	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին, դպրոցի ներքին կազմակերպչական աշխատանքներին	մշտապես	կրթ. աջ. գծով տեղակալ	

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Հետևել առաջին դասարան ընդունելության էլեկտրոնային գրանցման գործընթացին	մայիս-օգոստոս	տնօրեն, կրթ. աջ. գծով տեղակալ	
2 ա բ գ	Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում հաշվառել արտերկրից եկած աշակերտներին հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով	սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր	տնօրեն, կրթ. աջ. գծով տեղակալ, ծնողխորհուրդ	
3	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների, անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	տարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալ, ծնողխորհուրդ	
4	Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին, կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ	տարվա ընթացքում	տնօրեն, տեղակալներ, դասղեկներ	
5	Աշխատանք տանել 5-9-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ	ուստարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալ, դասղեկներ	
6	Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհրդին	տարվա ընթացքում	տնօրեն	
7	Աշխատանք տանել դժվար առաջադիմող աշակերտների հետ՝ ուսումնասիրելով նրանց հետաքրքրությունները	ուստարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալ, դասղեկներ, ծնողխորհուրդ, ուսուցչի օգնական	
8	Դպրոցի խորհրդի օգնությամբ հարստացնել դպրոցի արտաբյուջետային միջոցները	սեպտեմբեր, հոկտեմբեր	դպրոցի և ծնողական խորհուրդներ	
9	Արտաբյուջետային միջոցները ներդնել ուսումնական պրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով	ուստարվա ընթացքում	տնօրեն, դպրոցի խորհրդի նախագահ	

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1 ա բ	Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրենության նիստ, վերլուծել շաբաթական պլանները Լսել տնօրենության անդամների հաղորդումը շաբաթական պլանների կատարողականի մասին: Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները: Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը	ուստարվա ընթացքում	տնօրեն	
2	Վարել ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան	ուստարվա ընթացքում	ուսումն. գծով տեղակալ	
3	Հետևել, որ դասաժամերի բացթողումները լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով	մշտապես	ուսումն. գծով տեղակալ	
4	Ուսումնական տարվա սկզբից կատարել աշխատանքի բաժանում՝ որոշակի դարձնելով յուրաքանչյուրի աշխատանքի շրջանակները	օգոստոսի վերջ	տնօրեն	
5	Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի էլեկտրոնային թեմատիկ պլանավորումները	սեպտեմբերի սկիզբ	տնօրեն, ուսումն. գծով տեղակալ	
6	Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրենության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը	մշտապես	տնօրեն,կրթ. աջ. գծով տեղակալ	
7	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրենության նիստում կամ մանկավարժական խորհրդում	սեպտեմբեր	տնօրեն,տեղակալներ	
8ա բ	Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ծանոթանալու նպատակով անցկացնել ստուգողական, համադպրոցական գրավոր աշխատանքներ Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստում	դեկտեմբեր ապրիլ	տնօրեն, ուսումն. գծ. տեղակալ, մ/մ նախագահներ	
9	Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման վիճակը բնագիտական առարկաներից	սեպտեմբեր մայիս	ուսումն. գծով տեղակալ	
10	Ստուգել տարբեր առարկաներից տրված տեսադասերի, ստուգողական և ուսուցողական աշխատանքների քանակը և որակը: Արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում	կիսամյակի վերջում	տեղակալներ, մ/մ նախագահներ	

11	Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստերում	դեկտեմբեր ապրիլի սկիզբ	տնօրեն, տեղակալներ, մ/մ նախագահներ	
12	Ստուգել էլեկտրոնային դասամատյանների, աշակերտական ծրագրերի և գրավոր աշխատանքների վարման վիճակը	շաբաթը մեկ անգամ	ուս. գծով տեղակալ, դասղեկներ	
13	Խթանել ԱԽ գործունեությունը, վերջինիս նախաձեռնությամբ վերհանել սովորողների կրթական պահանջները, որակյալ կրթության խնդիրները	ուստարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալ	
14	Ստուգել դժվար առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները, քննարկել տնօրենության ընդլայնված նիստերում	հոկտեմբեր մարտ	կրթ. աջ. գծով տեղակալ	
15	Կազմակերպել գիտելիքների ստուգում տարրական դպրոցում /4-րդ դաս./	դեկտեմբեր ապրիլ	տեղակալներ	
16	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը, արդյունքները քննարկել դասղեկների, մ/մ, տնօրենության ընդլայնված նիստում	ուստարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալ	

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարմանժամկերը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ուսուցիչներին ժամանակին ապահովել առարկայական ծրագրերով և երաշխավորված մեթոդական գրականությամբ:	օգոստոս	տեղակալներ, մ/մ նախագահներ	
2	Ելնելով հակահամաճարակային միջոցառումներից, դպրոցում տեղաշարժը հնարավորինս նվազեցնելու նպատակով, ուսումնական առարկաների դասավանդումը կազմակերպել դասարանային համակարգով, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, օգտագործել առկա տեխ. միջոցների ողջ հզորությունը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
3	Աշխատանք տանել կաբինետներն ու դասարաններն անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ:	օգոստոս-սեպտեմբեր	տնօրեն	
4	Ապահովել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը, ինչպես նաև մենթորական աջակցությունը	ուստարվա ընթացքում	Տնօրեն, տեղակալներ	
5	Ուսուցիչների համար կազմակերպել էլեկտրոնային գրատախտակներից օգտվելու դասընթացներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ինֆորմ.ուս.	

6	Ստեղծել <<Մասնագիտական զարգացման դպրոց>> աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու նպատակով:	ուստարվա ընթացքում	կրթ. աջակց. գծով տեղակալ	
7	Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել մ/մ և մանկավարժական խորհրդի նիստերում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուսումնական գծով տեղակալներ	
8	Կատարել առարկայական ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստերում, առարկայական մ/մ նիստերում, տնօրենության խորհրդակցություններում: Ուսումնասիրել՝ ա/ հետևյալ առարկաների դրվածքը /2-9-րդ դաս./ • պատմություն • աշխարհագրություն • ֆրանսերեն • անգլերեն բ/ ՏՀՏ-ի օգտագործումը դասերին գ/ նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացումը:	տարվա ընթացքում	տնօրենություն	
9	Ուսումնասիրել լաբորատոր և գործն. աշխատանքների ծրագրային պահանջների կատարման ընթացքը բնագիտական առարկաներից:	դեկտեմբեր մայիս	տեղակալներ	
10	Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ, կազմակերպել ցերեկույթներ, լույս ընծայել պատի թերթեր	Հունվարից ապրիլ	տեղակալներ, մ/մ նախագահներ, ուսուցիչներ	
11	Բարձր դասարաններում անցկացնել առցանց գիտագործնական կոնֆերանսներ, աշակերտական ֆորումներ աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ:	հունվար ապրիլ	տնօրեն, տեղակալներ	
12	Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ: Առարկայական օլիմպիադաներին նախապատրաստել ուստարվա ընթացքում:	դեկտեմբեր	տնօրեն, մ/մ նախագահներ, հանձնաժողով	
13	Անցկացնել <<Գիտակների մրցույթ>>: Քույր դպրոցների հետ համատեղ կազմակերպել առցանց միջոցառումներ, տեսակոնֆերանսներ, տեսակամուրջներ:	հոկտեմբեր մարտ	կրթ. աջակց. գծովտեղակալ	
14	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքի:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղ., մ/մ նախ., ուսուցիչներ	
15	Հիմք ընդունելով աշակերտների ցանկությունն ու ծնողների համաձայնությունը՝ կազմակերպել լրացուցիչ վճարովի ծառայություններ տարբեր առարկաներից՝ ծնողների հետ կնքելով համապատասխան պայմանագրեր	սեպտեմբեր	տնօրեն, տեղակալներ	

16 ա/ բ/	Համագործակցել ավագ դպրոցների և միջին մասնագիտական հաստատությունների հետ՝ մասնագիտական կողմնորոշում ձեռք բերելու նպատակով Շարունակել համագործակցությունը • Փարիզի «Դպրոցասեր» վարժարանի հետ • Քաղաքային գրադարանների հետ • Այլանս ֆրանսեզ և Կարմիր Խաչ ընկերությունների հետ	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
17	ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔ Դասղեկներին օգնել կազմել դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման	սեպտեմբերի սկիզբ	կրթ. աջակց. գծով տեղակալ	
18 ա/ բ/ գ/ դ/ ե/ զ/	Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները՝ Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն, դաստիարակության հիմքում դնել հիմնական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները, շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին, հետևողական աշխատանքների միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները, տարեկան առնվազն չորս անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, իսկ առնվազն երկու անգամ՝ համադպրոցական ժողովներ: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Հանդիպումները կազմաերպե հեռավար, անհնարինության դեպքում՝ բացօթյա տարածքներում: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ, յուրաքանչյուր դասարանում ստեղծել 3-5 հոգուց բաղկացած ծնողխորհուրդ, ապահովել ծնողխորհրդի մասնակցությունն ուսումնական գործընթացի կազմակերպմանը, Ապահովել ծնող-ուսուցիչ կապը:	ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում սեպտեմբեր ուստարվա ընթացքում	տնօրեն, կրթ. աջակց. գծով տեղակալ, դասղեկ-դասվարներ կրթ. աջակց. գծով տեղակալ, դասղեկ-դասվարներ կրթ. աջակց. գծով տեղակալ, դասղեկ-դասվ., ծնողխորհուրդ տեղակալներ, դասղեկ-դասվարներ տեղակալներ, դասղեկ-դասվարներ	
18 ա/ բ/	ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հետևողական աշխատանքներ տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ, դպրոցում ստեղծել տնօրենությանը կից գեղագիտական դաստիարակության զարգացման խորհուրդ,	ուստարվա ընթացքում սեպտեմբեր	տնօրեն, տեղակալներ, դասղեկներ, ծնողխորհուրդ տնօրեն, կրթ. աջակց. գծով տեղ.	

գ/	սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղագիտական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն,կրթ. աջակց. գծով տեղակալ, ծնողխորհ.	
19	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ			
ա/	Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզականգույքով:	օգոստոս սեպտեմբեր	տնօրեն, տնտ. գծով տեղակալ	
բ/	Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից:	ուստարվա ընթացքում	տեղակալներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	
գ/	Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ֆիզկուլտուրայի դասերն անցկացնել դասարաններում:			
դ/	Խստորեն վերահսկել դասարաններում, լաբորատորիաներում անվտանգության և սանիտարական կանոնների պահպանումը:	մշտապես	տնօրեն, կրթ. աջակց. գծով տեղ., ուսուցիչներ	
ե/	Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային, պահպանել դասացուցակների կազմման և տնային ինքնուրույն աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները:	մշտապես	ուսումն.գծ. տեղ.	
զ/	Պարբերաբար լսել դպրոցական բուժքրոջ հաղորդումը՝ աշակերտների առողջական վիճակի և բուժական միջոցառումների իրականացման արդյունքների մասին:	ուստարվա ընթացքում	բուժքույր, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	
է/	Բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց բոլոր դասարանների սովորողների հետ օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին:	մշտապես	տնօրեն, ֆիզկուլտ. ուս., բուժքույր	
ը/	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել <<Առողջության օր>>: Առցանց հանդիպում կազմակերպել բժիշկների՝ տարբեր մասնագիտությունների գծով: Կազմակերպել զրույց-զեկուցումներ աշակերտների շրջանում:	ուստարվա ընթացքում	կրթ. աջակց. գծով տեղակալ	
20	ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ			
ա/	Կազմակերպել հանդիպումներ, հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի, ապրիլյան քառօրյայի մասնակիցների հետ:	Ուստարվա ընթացքում	զինղեկ, պատմ. ուս.	
բ/	Կազմակերպել այցելություններ Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին:	սեպտեմբեր մայիս	կրթ. աջ. գծ. տեղակալ, զինղեկ, դասղեկներ	
գ/	Անցկացնել<<Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում>> միջոցառումը: Աշխատանք տանել ոչ ռազմականացված խմբավորումների հետ:	մարտի 1-ին	տնօրեն, զինղեկ	

21 ա/ բ/	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը: Դպրոցամերձ հողամասի մշակման և ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցով, սեր արթնացնել աշխատանքի հանդեպ:	ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում	տնօրեն, կրթ. աջ. գծ. տեղակալ., ուսուցիչներ ուսուցիչներ, դասղեկներ	
21 ա/ բ/ գ/ դ/ ե/ զ/ է/	ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆԱՇԽԱՏԱՆՔ Օգնել գրադարանավարին՝ կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը: Դպրոցի հնարավորություններից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը: Վերանորոգել գրադարանային ֆոնդի դասագրքերն ու գրքերը: Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ: Ստեղծել <<Պատանի ստեղծագործողի>> ակումբ: Նպաստել երեխաների ստեղծագործական մտքի զարգացմանը: Ի հայտ բերել տաղանդավոր աշակերտներին: Ստեղծել թեմատիկ քարտարաններ, ղեկավարել կրտսեր դպրոցի ընթերցանությունը: Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր: Պատշաճ կերպով կատարել դպրոցների կառավարման էլեկտրոնային համակարգի աշխատանքները	օգոստոս մշտապես ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում սեպտեմբեր ուստարվա ընթացքում	տնօրեն, կրթ. աջ. գծ. տեղակալ ուսուցիչներ, գրադարանավար գրադարանավար գրակ. ուսուցիչներ, գրադարանավար գրադարանավար տնօրեն, գրադարանավար գրադարանավար, օպերատոր	

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Գրադարանում և ուսուցչանոցում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մեթոդական, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով:	օգոստոս-սեպտեմբեր	ուս. գծով տեղակալներ, գրադարանավար	
2	Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ հանրակրթական	օգոստոս	տնօրեն, տեղակալներ	

	հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Հանձնարարել՝			
ա/	Առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման,	օգոստոս	տնօրեն	
բ/	Ներկայացնել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով և սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկություններ,	օգոստոս	ուս. գծով տեղակալներ	
գ/	Ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարականներ: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն /գրավոր/ տնօրենությանը:	սեպտեմբերի 1-11	ուս. գծով տեղակալներ	
3	Անցկացնել առարկայական մասնախմբերի նախագահների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ, անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել մանկավարժական հրատապ հիմնահարցեր:	ամիսը մեկ անգամ	տնօրեն, տեղակալներ	
4	Դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել I-IX դաս. դասղեկների միավորումներ: Պլանները ներկայացնել հաստատման:	օգոստոս	կրթ. աջ. գծով տեղակալ	
5	Կատարել նպատակային դասալսումներ միջին հաշվով շաբաթական 13-16 ժամ. տնօրեն՝ 4-5 ժամ, տեղակալներ՝ 7-8, մ/մ նախագահ՝ 2-3: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություն-հանձնարարություններ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղակալներ, մ/մ նախագահներ	
6	Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մ/մ նախագահներ	
7	Ապահովել ուսումնական արդյունքների ստուգման և գնահատման գործընթացը: Անհրաժեշտության դեպքում ստեղծել թեմատիկ հարցաշարեր և պարբերաբար միջին դպրոցում աշակերտների գիտելիքները ստուգել նաև էլեկտրոնային գործիքների միջոցով:	տարվա ընթացքում	տնօրենություն, մ/մ նախագահներ, ուսուցիչներ	
8	Հարստացնել դպրոցի լաբորատորիաները: Հետևել, որպեսզի դասը հագեցած լինի	ուստարվա ընթացքում	տնօրենություն	

	զանազան ուսումնադիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը:			
9	Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	ուստարվա ընթացքում	տեղակալներ, մ/մ նախագահներ, ուսուցիչներ	
10	Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ: Այդ նպատակով հրավիրել մասնագետներ այլ հաստատություններից:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
11	Ուսուցիչների մեթոդական բնույթի զեկուցումները քննարկել առարկայական մասնախմբերում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մ/մ նախագահներ	
12	Ուսումնասիրել հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը և տարածել դպրոցում	ուստարվա ընթացքում	տնօրեն	
13	Մանկավարժական խորհրդում ներկայացնել զեկուցումներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
14	Աշակերտների համար կազմակերպել խորհրդատվություններ քննություններին նախապատրաստվելու համար:	մայիս	տնօրեն, ուս. գծով տեղակալներ	
15	Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել քննական կարգացուցակը՝ քննությունները սկսվելուց առնվազն 10 օր առաջ:	մայիս	տնօրեն, ուս. գծով տեղակալներ	
16	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժական նորագույն նվաճումներին:	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
17	Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ ԿԳՄՄՆ հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Հ/Հ	Աշխատանքիբովանդակությունը	Կատարմանժամկերը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Կազմել տարիֆիկացիա	սեպտեմբեր	տնօրեն	
2	Մշակել դպրոցի բյուջեի նախագիծը, կազմակերպել նախագծի քննարկումներ, լսումներ	02.09-15.11	տնօրեն, հաշվապահ	
3	Կազմել ծախսերի նախահաշիվ, քննարկել դպրոցի խորհրդում և ներկայացնել քաղաքապետարանի ֆինանսական վարչություն	ուստարվա ընթացքում	հաշվապահ, դպրոցի խորհուրդ	
4	Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունները ներկայացնել լիազոր մարմին և հրապարակել սահմանված կարգով	ուստարվա ընթացքում	հաշվապահ, դպրոցի խորհուրդ	
5	Արտաբյուջետային ծախսերի նախահաշիվը համաձայնեցնել դպրոցի խորհրդի հետ	ուստարվա ընթացքում	տնօրեն	
6	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	տնտ. գծով տեղակալ	
7	Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում:	նոյեմբեր	տնօրեն, տնտ. գծով տեղ, հաշվապահ	
8	Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	ուստարվա ընթացքում	տնտ. գծով տեղակալ	
9	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը:	ուստարվա ընթացքում	տնտ. գծով տեղակալ	
10	Աշխատանք տանել կաբինետների և լաբորատորիաների կահավորման, հարըստացման, եղած գույքը և սարքավորումներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:	մշտապես	կաբինետների և լաբորատորիաների պատասխանատուներ	
11	Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ:	ուստարվա ընթացքում	տնտ. գծով տեղ., դասղեկներ	
12	Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տնտ. գծով տեղակալն	

ՊԼԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՄՈՏԵՑՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Հիմք ընդունելով դասղեկների զեկուցագրերը՝ կատարել մանկավարժական հատուկ մոտեցում պահանջող աշակերտների հաշվառում:	սեպտեմբեր	կրթական աջակց. գծովտեղակալ	
2	Համընդհանուր ներառման գործընթացի իրականացում և վերահսկում	տարվա ընթացքում	տեղակալներ, դասղեկներ	
2	Կազմակերպել զրույցներ հետևյալ թեմաներով Ծնողների համար՝ 1. <<Ինչպես է տարածվում վիրուսները>> 2. <<Ընտանիքի դերը երեխայի արժեքային համակարգի ձևավորման գործում>> Աշակերտների համար՝ 1. <<Ինչ մասնագիտություն ընտրել>> 2. <<Ինչպես կարող են մարդիկ օգնել հիվանդությունների տարածվելուն>>:	հոկտեմբեր մարտ ուստարվա ընթացքում	տնօրեն կրթական աջակց. գծով տեղակալ հանձնախումբ	
3	Անցկացնել զրավոր հարցազրույց <<Հանդուրժողականություն>> թեմայով:	սեպտեմբեր	դասղեկներ	
4	Դպրոցի փորձառու մանկավարժներին կցել հատուկ մոտեցում պահանջող աշակերտներին՝ նրանց պահելով ամենօրյա ուշադրության կենտրոնում:	տարվա ընթացքում	ուս. Գծով տեղակալներ	
5	Հատուկ մոտեցում պահանջող աշակերտներին ներգրավել բարեգործական աշխատանքներում, դպրոցամերձ հողամասում հատկացնել հողատարածք, որի մշակման պատասխանատվությունը դնել նրանց վրա, կազմակերպել այցելություններ՝ 1. <<Զատիկ>> մանկատուն	ուստարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալներ, դասղեկներ	
6	Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհրդին:	տարվա ընթացքում	տնօրեն	
7	Դժվար առաջադիմող աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների և հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական խմբակներում, ակումբներում, սեկցիաներում:	ուստարվա ընթացքում	կրթ. աջ. գծով տեղակալներ, դասղեկներ, ծնողխորհուրդ	
8	Արտաբյուջետային միջոցները ներդնել ուսումնական պրոցեսի արդյունավետության նպատակով:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դպրոցի խորհրդի նախ.	